

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Հայոց քանակի կազմավորման 20-ամյա հոբելյանի առթիվ**

27.01.2012

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, միշտ էլ հաճելի է ջերմ խոսք ասել, երբ համընդհանուր տրամադրությունը փառավորի ու տոնականի մասին է: Ուստի ցանկանում եմ բոլորիս շնորհավորել մեր պանծալի քանակի 20-ամյակի առթիվ, ինչի կապակցությամբ ազգովի հպարտանալու իրավունք ունենք և նույնքան վսեմությամբ՝ գնահատելու նրա միասնական ուժն ու ձեռքբերումները:

Հայոց քանակը մեր ազգային նվաճումների մեծագույն արժեքներից է, ամենաանհրաժեշտն ու կենսականը: Նրա կուռ շարքերի և անսասան հիմքերի վրա են կերտվում մեր երկրի ներկան ու ապագան: Մեր քանակը համայն հայության երազանքների ամենատեսանելի ու նվիրական խորհրդանիշն է: Իսկապես անժխտելի է, որ զինվորի, սպայի, բոլոր աստիճանների հրամանատարական կազմի ստույգ հայրենասիրության, զինվորական օրենքի հանդեպ նրանց կարգապահությամբ է պայմանավորված թանկ գնով նվաճված մեր անկախության, հայրենքի սահմանների պաշտպանության և Արցախի խնդրի արդարացի լուծման նպատակները:

Իսկ որ Հայոց քանակն արդեն մեծ ուժ է և հզորացած կառույց, այդ բանը շատերին է հայտնի, այդ թվում՝ առաջին հերթին տարածաշրջանի պետություններին: Ահա թե ինչու մեր երկրի ղեկավարությունը, Պաշտպանության նախարարությունը ոչինչ չեն խնայում մեր քանակի առավել հզորացման համար, որ մշտապես կայուն լինեն մեր ժողովրդի ստեղծագործելու և անվտանգության երաշխիքները:

Սիրելի բարեկամներ, խաղաղասեր ու բարին կամեցող մեր ժողովուրդը դարեր շարունակ երազել է սեփական ուժերով պահպանել իր բնօրրանը, իր հող-հայրենին, ցանկացել է ամուր ու անսասան պահել հայրենի տունը, զորավիզ դառնալ իր զավակներին, նրանց մեջ ամրացնել ազնիվ ու վսեմ ապրելու ճիշտ գաղափարները:

Այսօր մեծ շուքով տոնելով Հայոց ազգային քանակի հոբելյանական 20 տարին, հայ ժողովուրդը հպարտորեն է նայում նրա դեռևս կարճ, բայց հաղթական ճանապահին, որտեղ մեկ անգամ ևս նա ապացուցեց, որ հանուն հայրենիքի պատրաստ է տալու ամենաթանկը՝ իր կյանքը: Դրա փառավոր վկայությունը Արցախի ազատամարտն էր, որի ընթացքում երկրապահներն ու կազմավորվող քանակի առաջին շարքերը միավորվեցին և դարձան միասնական բռունցք:

Հանդիսավոր այս պահին մեր սերն ու երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր պատմության տարբեր ժամանակներում զիտակցաբար ծառայել են ազգանվեր նպատակների: Հարգանքով ու խոնարումով ենք հիշում ժողովրդի

աննկուն զավակներին, ովքեր հանուն ազգային միասնական հաղթանակի՝ մարտի էլան և սուրբ նպատակների համար անմահացան: Որքան էլ ժամանակը հեռանում է անցյալի իրադարձություններից, նույնքան անգամ վեհանում են նրանք՝ հայրենքին իրենց կյանքը տված քաջազուն տղաները: Իսկ բոլոր ժամանակներում մեծ ու ազնիվ գործերի համար ընկածները սրբանում են ժողովրդի սրտում:

Միրո և խոնարհումի այդ վսեմ տուրքով խնդրում եմ մեկ բոլոր լռությամբ հոտնկայս հարգենք հայրենյաց փրկության համար իրենց կյանքը տված բոլոր զոհերի հիշատակը:

Հիշողություններ կան, որոնք տարեգրության մատյանի մեջ գրվելու են ոսկե տառերով, իրադարձություններ կան, որոնք ժողովրդական սիրո, նրա իմաստնության ոգեղեն գրավական են, պատիվ ու նվիրում այն զավակներին, ովքեր զինվորագրվեցին հայոց բախտին, դարձան նրա տերը, խաղաղության դիրքերի զինակիր պաշտպանները:

Պատմությանն է հայտնի, որ հայ մարտիկները ապացուցել են իրենց զենքի ուժը, հիշենք Սարդարապատի հերոսամարտը, Հայրենական մեծ պատերազմը, Արցախի ազատամարտը: Ամեն տեղ հայ ժողովրդի զավակները իրենց «Սուրբ փառքով դրեցին պատյան», դարձան ազատաբաղձ նպատակների կրողը և օրինակ՝ գալիք սերունդներին: Այսօր, ի տես աշխարհի, Հայոց ազգային բանակը իր վաստակած դրոշի վրա կրում է իր ծննդյան 20-րդ տարեդարձը, որը մեր ժողովրդի վսեմության, նրա խաղաղասիրական և ազնիվ նպատակների պաշտպանության գրավականն է՝ վավերացված այն զինվորական գնդերի ու ստորաբաժանումների հզոր միասնությամբ, որոնք օր ու գիշեր պաշտպանում են մեր ինքնիշխան հայրենիքի սահմանները՝ կրելով ժողովրդի կողմից նրանց վստահված խղճի և հզության պատասխանատվությունը:

Մենք հպարտորեն ենք նշում, որ մեր երկրի վերընթացի ապահովման, նրա պաշտպանության ամրապնդման, միջազգային ասպարեզում մեր Հանրապետության՝ Նախագահի՝ Սերժ Սարգսյանի վարած հավասարակշիռ քաղաքականության շնորհիվ՝ բարձրացել է Հայաստանի պետության հեղինակությունը, ամրապնդվել են հեռանկարային ու նպատակային դաշինքները, հզորացել են մեր երկրի կենսագործունեության բոլոր բնագավառների ներքին ու արտաքին երաշխիքները: Դրա վառ վկայություն է օրերս ՖՐԱՆՄԻԱՅԻ հզոր պետության փաստացի արձագանքը, երբ դեմոկրատական այդ մեծ երկրի Սենատը ընդունեց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու մասին օրինագիծը: Շնորհակալ լինենք մարդու իրավունքների և արդարության բացառիկ դրաշակակիր Ֆրանսիային և շնորհավորենք մեկս մյուսի՝ մեր ազգային մեծ սպասումների առջև հույսի շող բացվելու պատմական այս առիթով:

Շատ կարևոր է, որ իրադարձությունների այսպիսի վերընթացը բոլորիս առաջնորդի ամբողջ հոգով և շիտակությամբ գնահատելու մեր երկրի վերջին տարիների առաջընթացը, դրանով նաև Հայոց Բանակի դերն ու նշանակությունը, միաժամանակ գնահատելու և գուրգուրելու այն միասնությունը, հավատն ու համերաշխությունը, որոնք Հայաստան երկրի առաջիկա մեծ ծրագրերի իրականացման առաջնությունն ու գլխավոր նպատակը պետք է լինեն:

Ահա թե ինչու աշխարհաքաղաքական նոր ու բուռն իրադարձություններին զուգահեռ՝ ընդհանուրիս միասնությամբ, բարձրաձայն և իրավունքով պետք է հնչեցնենք, որ մեր ազգային բանակը ժողովրդի ուժի շնորհիվ մեր անկախ երկրի կամքի և միասնության կրողն է, պատրաստ՝ դիմակայելու թշնամական բոլոր ոտնձգություններին, պաշտպանելու մեր սրբազան եզերքները, առավել հզոր դարձնելու մեր պետության հիմքերը:

Փառք ու պատիվ հայ զինվորին, 20-ամյա հայոց փառապանծ բանակին, մեր ժողովրդի լուսավոր երազանքների ամրակուռ պաշտպաններին: